



Կատարեք ներդրումներ՝ ձեր աշխատավայրում Էներգիայի օգտագործումը կրճատելու նպատակով

Էներգաարդյունավետությունը գերակա ուղղություն է ԵՄ-ի համար, որը ֆինանսավորում է մի շարք նախաձեռնություններ՝ Արևելյան գործընկերության տարածաշրջանում Էներգիայի օգտագործման ծավալների կրճատման ուղղությամբ:

Ձեր աշխատավայրի Էներգաարդյունավետության ուղղությամբ ներդրումները կապահովեն ամենամեծ երկարաժամկետ եկամուտները՝ ավելի փոքր հաշիվների և ավելի ցածր Էներգետիկ ծախսերի տեսանկյունից: Նշանակալի ներդրումները պահանջում են մասնագիտական փորձաքննություն, հետևաբար փորձագետին խնդրեք իրականացնել **Էներգետիկ աուդիտ**՝ ձեր շենքի թույլ կողմերը բացահայտելու և առավել ծախսաարդյունավետ կերպով **բարելավումներ նախագծելու** նպատակով:



Որոշ ներդրումների օրինակներ, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել՝ մեծ տարբերություն ապահովելու համար



Ամբողջությամբ մեկուսացրեք պատերն ու տանիքը՝ Էներգետիկ կորուստները նվազեցնելով **20-30%-ով**:



Օգտագործեք **վերականգնվող Էներգիա** և անցում կատարեք գրոյի ձգտող Էներգասպառման:



Մեկուսացրեք և անջրանցիկ դարձրեք նկուղը՝ Էներգետիկ կորուստները նվազեցնելով **մինչև 10-12%-ով**:



Օգտագործեք **ջերմային պոմպեր**՝ ձեր գրասենյակի Էներգաարդյունավետության ցուցանիշն ավելացնելով **շուրջ 50%-ով**:



Առաքման կամ տեղափոխման համար օգտագործեք **Էլեկտրական մեքենաներ**՝ Էներգետիկ ծախսերը կրճատելով **մինչև 70%-ով**:

* Ներկայացված ցուցանիշները միջինացված են և, հետևաբար, նշված Էներգետիկ խնայողության ծավալները կարող են տատանվել:

